

Ատան, որ եւ ' թամուն սենեկալ էր թագաւորութեանն, եւ երկրորդ նմին հոգացող տանն արքունի՝ զգունդստապլն Կոստանդին, Պալլ անուանեալ զերկոսին եւս. յանձն առնէր եւ հայրապետին Յովհաննու՝ հայրաբար առաջնորդել ամենեցուն՝ իկարեւոր յայնմ ժամանակին. եւ առ հասարակ ամենայն իշխանացն եւ աւագորերոյ՝ որք մի ըստ միոջէ յաւելեալ յարքունի կարաւանն՝ զհետ երթային պատգարակացն, յահեղասքանչ յայնմ չուաւորութեան. կրկնէր եւ երեքկնէր զխոստմունս նոցա եւ զիրն, անհակառակ եւ անյապաղ պսակել՝ ' իգալստեանն՝ իեռաւոր երկրէն՝ զտղայ արքայորդին Ունգարաց՝ ընդ տղայ արքայադստերն, եւ հոչակել թագաւոր եւ թագուհի Հայոց: Եւ հուսկ անգամ առեալ՝ ինոցանէ խոստումն հաւատարմութեան՝ յօթեվանի Մրվանայ գեղջ՝ ուր հասեալ էին, անդէն դադարեցոյց զանդրովարսն եւ զչուն, զի զգաց մօտալուտ եւ զանդարձական զիր գնացսն. եւ իբրեւ ամենեցուն զիրաքանչիւր պատշաճն պատուիրեաց, յետին կտակ՝ յ'արձակելն զմերձակայսն՝ աւանդէր զայս, զի իբրեւ զամենայն մարդոյ հողածնի եւ քրիստոնէի՝ հոգացեն զհոգի իւր՝ աղօթիւք եւ պաշտամամբք քրիստոսական լուսաւոր հաւատոցս, եւ զմարմին իւր հանգուցեն յԱկներոյ վանսն՝ ուր դէմ եղեալն էր:

Հրաժարեալ այնուհետեւ յամենեցունց՝ դարձաւ անձամբ առ անձն, եւ ' իհրաժեշտ հոգւոյն՝ իհնացեալ պահարանէն. մի միայն առ այս՝ ի յետնումն անդ միայնութեան՝ կոչեցեալ միջնորդ ընդ ինքն եւ ընդ Աստուած, զհայր խոստովանութեան իւրոյ, զիմաստնագոյնն եւ զհոչակեալն՝ իվարդապետս ժամանակին, զմտերիմն եւ հոգեկիր Սրբոյ Լամբրունեցւոյն, զԳրիգոր Սկեւռացի. ընդ որոյ աստուածափոխան աջովն՝ զիջոյց զբարձր եւ զխոնարհեալ գլուխ իւր. ետ խոստովանութեամբ զհամար կենացն մինչ չեւ մտեալ յատեան ամենադատաւորին. եւ «դաւանեալ զխոստովանութիւն ուղղափառ հաւատոյն, (որպէս յիշեցուցանէ պատմիչն), եւ ընկալեալ զհաղորդութիւն՝ իձեռաց սուրբ վարդապետին, գոհանալով զՏեառնէ», աւանդեաց առ նոյն զոգին, զոր այնքան վսեմափայլ եցոյց՝ իմահացու կայարանին: Ամսամուտ կամ երկրորդ օր էր մայիսի յաւերժայիշատակն այն օր, 1219 թուականին Քրիստոսի, եւ Հայոց ՈԿԸ,՝ իբրման երեսներորդի երկրորդի ամի իշխանութեան իւրոյ եւ՝ իբսան եւ միոյ թագաւորութեանն: